ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԸ ՀՅՈՒՐԸՆԿԱԼԵԼ Է ԵՐԵՎԱՆԻ ԹԻՎ 104 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻՆ

17.05.2022 17:46

Այսօր՝ 2022 թվականի մայիսի 17-ին, Երևանի թիվ 104 հիմնական դպրոցի աշակերտները հյուրընկալվեցին Փաստաբանների պալատում:

Աշակերտներին ողջունեց Փաստաբանների պալատի նախագահ Սիմոն Բաբայանը և նրանց ներկայացրեց Փաստաբանների պալատի գործառույթները, ինչպես նաև փաստաբանի առաքելությունը՝ արդարադատության համակարգում:

Այցելուների հետ հանդիպեց նաև Փաստաբանների պալատի իրավական հարցերով փորձագետ Սոնա Խաչատրյանը:

Ողջունելով աշակերտներին՝ Սոնա Խաչատրյանը պատասխանեց փաստաբանության վերաբերյալ հետաքրքրող բոլոր հարցերին:

Աշակերտներին նաև հնարավորություն տրվեց շրջելու Փաստաբանների պալատի վարչական շենքում, Փաստաբանական դպրոցում և Հանրային պաշտպանի գրասենյակում՝ աշխատանքային գործընթացներին անմիջականորեն ծանոթանալու համար:

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })